

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2013 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Երեւան 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	1
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ	5
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ.....	7
ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	7
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ.....	7
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	9
Եվրոպա	9
Եվրոպական Միություն	9
Եվրոպական երկրներ.....	11
ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ.....	14
Վրաստան	14
Իրան.....	15
Թուրքիա.....	15
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	16
ԱՊՀ մասնակից երկրներ	17
ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՖՐԻԿԱ	19
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ	21
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ.....	22
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23
ՀԱՊԿ	23
ՆԱՏՕ.....	24
ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	25
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	25
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	25
ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ	
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....	26
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ	27
ՍԵՎԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	
.....	28
ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	29
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	29
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	30
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ	31
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.....	31
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ.....	32

ՆԱԽԱԲԱՆ

Հիմնվելով ՀՀ Նախագահի ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշների և նրա կողմից տրված հանձնարարականների վրա՝ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը 2013 թվականի ընթացքում շարունակել է աշխատանքներն՝ ուղղված երկրի արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, երկրի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, տարբեր մայրցամաքներում Հայաստանի բարեկամների թվի ավելացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը, միջազգային ասպարեզում մեր հեղինակության և դիրքերի ամրապնդմանը, արտերկրում հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, հայկական մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային հարաբերություններում դրական օրակարգ ձևավորող և մեր շահերին համահունչ նախաձեռնությունների իրականացմանը:

Տարին նշանավորվեց Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության միանալու որոշմամբ, որը բխում է Հայաստանի տնտեսական և ռազմավարական շահերից:

2013թ.-ին կարևոր էին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում Հայաստանի արդյունավետ նախագահությունները:

Արցախյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Հայաստանը 2013թ. շարունակեց Մինսկի խմբի համանախագահների հետ համատեղ ջանքերը՝ հիմնահարցի բացառապես խաղաղ, միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա հանգուցալուծման ուղղությամբ:

Հունիսի 18-ին Էնիսկիլենում կայացած «Մեծ ութնյակի» գագաթաժողովի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարների՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների ու Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարությունը ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ մեկ անգամ ևս վերահաստատեց, որ միջազգային հանրության մոտեցումները համահունչ են Հայաստանի կողմից որդեգրված դիրքորոշմանն առ այն, որ հիմնախնդրի խաղաղ հանգուցալուծումը չունի այլընտրանք և կարգավորման հիմնարար սկզբունքներն ու տարրերը մեկ ամբողջություն են և դրանցից որևիցե մեկին մյուսի նկատմամբ գերակայություն տալու փորձերն անհնարին կդարձնեն հիմնախնդրի կարգավորումը: Հայաստանը նույն օրը բարձր գնահատեց այդ հայտարարությունը և, ի պատասխան եռանախագահ երկրների ղեկավարների կոչին, ևս մեկ անգամ վերահաստատեց իր հանձնառությունը միջազգային իրավունքի սկզբունքների, մասնավորապես՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման ու տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա հիմնահարցի կարգավորմանը:

Բանակցային գործընթացին նոր թափ հաղորդելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվեց շուրջ երկու տարի ընդմիջումից հետո՝ նոյեմբերի 19-ին, Վիեննայում Հայաստանի և Ադրբեջանի Նախագահների հանդիպման ժամանակ:

Չնայած տարվա ընթացքում Ադրբեջանական կողմը շարունակում էր ռազմատենչ հայտարարությունները, սադրանքները Հայաստանի հետ սահմանին և Արցախի հետ շփման գծում, հրադադարի ռեժիմի կոպիտ խախտումները, Կիևում դեկտեմբերին կայացած ԵԱՀԿ նախարարական խորհրդին ընդունվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների և Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների համատեղ հայտարարությունը, որտեղ նշվեց հիմնախնդրի խաղաղ և արդարացի կարգավորման գործընթացի շարունակման հանձնառությունը:

Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ Հանրապետության Նախագահի հանձնարարականների կատարման ուղղությամբ ԱԳՆ և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից սփյուռքի կառույցների հետ համատեղ հետևողական աշխատանքներ են տարվել Հայոց ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ գործած ոճիրի միջազգային ճանաչման և դատապարտման ուղղությամբ: Մարտի 22-ին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 22-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնությամբ առաջադրված ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևը:

Հայաստանը շարունակել է սերտացնել իր ռազմավարական դաշնակցային հարաբերությունները **Ռուսաստանի** հետ: Տարին նշանավորվեց երկու երկրների բարձրագույն ղեկավարության փոխայցելություններով ու հանդիպումներով: Տարեվերջին ՌԴ Նախագահի՝ Հայաստան կատարած պետական այցի շրջանակներում ձեռք բերվեցին ռազմավարական նշանակության պայմանավորվածություններ՝ միտված Հայաստանի տնտեսական վերելքին և անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Շարունակել է խորանալ **Ամերիկայի Միացյալ Նահանգների** հետ Հայաստանի բարեկամական գործընկերությունը, ինչին նաև նպաստել է ակտիվ քաղաքական երկխոսությունը, տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի արդյունավետ գործունեությունը:

Եվրոպական երկրների հետ քաղաքական երկխոսության, տնտեսական համագործակցության և մշակութային կապերի ամրապնդումը շարունակել է մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության գերակայությունների շարքում: 2013 թ. շարունակվել է **Հայաստան-Եվրոպական Միություն** ակտիվ համագործակցությունը: Նոյեմբերի 29-ին ՀՀ Նախագահի մասնակցությամբ Վիլնյուսում կայացած Արևելյան գործընկերության երրորդ գագաթաժողովի շրջանակներում երկուստեք վերահաստատվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում Հայաստան-ԵՄ համապարփակ համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու հանձնառությունը: Այդ կապակցությամբ ընդունվել է Հայաստան - Եվրոպական Միություն համատեղ

հայտարարությունը, և ՀՀ ԱԳ նախարարի ու ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցչի միջև նամակներ են փոխանակվել, որոնք ուրվագծում են ապագային միտված Հայաստանի և Եվրամիության միջև համագործակցության օրակարգը:

Հայաստանը շարունակել է ամրապնդել բարիդրացիական հարաբերություններն անմիջական հարևաններ **Վրաստանի և Իրանի** հետ:

Հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորման Հայաստանի սկզբունքային մոտեցումը շարունակել է վայելել միջազգային հանրության աջակցությունը:

Տարվա ընթացքում արտգործնախարարը այցելել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ երկրների մայրաքաղաքներ, հանդիպումներ ունեցել այդ պետությունների իր գործընկերների հետ:

Շարունակվել է ակտիվ ներգրավվածությունը **Անկախ Պետությունների Համագործակցության** շրջանակներում իրականացվող փոխգործակցությանը, ԱՊՀ մասնակից պետությունների հետ ձևավորված ավանդական կապերի խորացումը:

Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցության ու Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացին մասնակցության վերաբերյալ որոշման համատեքստում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում զգալի առաջընթաց է գրանցվել **Մաքսային Միությանը** Հայաստանի անդամակցության ճանապարհին:

Կարևոր տեղ է հատկացվել **Զինաստանի, Հնդկաստանի և Ճապոնիայի** հետ հարաբերություններին: Շարունակվել են դիվանագիտական կապերի աշխարհագրության ընդլայնմանն ուղղված հետևողական քայլերը:

Աշխատանքներ են տարվել արաբական երկրների հետ ավանդական հարաբերությունների զարգացման գործում, խորացել է համագործակցությունը լատինամերիկյան և ասիական տարածաշրջանների պետությունների հետ:

Օրակարգում առանցքային տեղ են զբաղեցրել սիրիահայության անվտանգության և **Սիրիայում** մեր պատմամշակութային ժառանգության պահպանման հետ կապված հարցերը:

Հայաստանի Հանրապետության անվտանգության կարևոր բաղադրիչ հանդիսացող **Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության** շրջանակներում Հայաստանը շարունակել է հանդես գալ կառույցի առավել ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններով:

Հետևողական զարգացում է ապրել փոխգործակցությունը **ՆԱՏՕ-ի** հետ: Հետևողական կերպով շարունակվել է ակտիվ ներգրավվածությունը **Միավորված Ազգերի Կազմակերպությունում**, Հայաստանը ընտրվել է **ՅՈՒՆԵՍԿՕ-ի** Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի անդամ:

Շարունակվել է ակտիվ ներգրավվածությունը **ԵԱՀԿ-ի, Ֆրանկոֆոնիայի** միջազգային կազմակերպության և մի շարք այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների աշխատանքներին:

Կարևորելով արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչը՝ շարունակվել են քայլերը միջազգային տնտեսական համագործակցության գործընթացներում Հայաստանի ներգրավվածության ընդլայնման, արտաքին տնտեսական կապերի ամրապնդման, Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խրախուսման ուղղությամբ, շարունակվել են աշխատանքները գործընկեր պետությունների հետ տնտեսական հարաբերությունների զարգացման նպատակով ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցների և ֆինանսական հաստատությունների շրջանակներում: ԱԳՆ համակարգմամբ տեղի են ունեցել տասնյակ միջկառավարական հանձնաժողովների նիստեր, գործարար համաժողովներ:

Արտաքին գործերի նախարարության կողմից ակտիվ աջակցություն է ցուցաբերվել միջխորհրդարանական կապերի զարգացմանը, կարևոր տեղ է հատկացվել տարբեր երկրների հետ ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքներին:

Հայաստան – Սփյուռք կապերի ամրապնդման խթանումը նույնպես եղել է արտագործնախարարության ուշադրության կենտրոնում և այդ ուղղությամբ գործունե աջակցություն է ցուցաբերվել Սփյուռքի նախարարության աշխատանքներին:

ԱԳՆ համակարգել է Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը և նպաստել դրանց խորացմանը:

Արտաքին գերատեսչության գերակայությունների շարքում և մշտական ուշադրության կենտրոնում են եղել արտերկրում երկկողմ և միջազգային հարթություններում մշակութային համագործակցության խթանումը, հայկական պատմամշակութային ժառանգության պահպանումը, ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը:

2013թ. ընթացքում Հանրապետության Նախագահին իրականացրել է 15 օտարերկրյա այց: Հայաստան է այցելել 3 պետության և կառավարության ղեկավար: ԱԺ նախագահը 9 արտերկրյա այց է կատարել, Հայաստան է ժամանել 6 երկրի խորհրդարանի ղեկավար: Վարչապետն իրականացրել է 6 արտերկրյա այցելություն: Արտգործնախարարը կատարել է 48 օտարերկրյա այց, Հայաստան է այցելել 12 երկրի արտգործնախարար և միջազգային կազմակերպության 10 ղեկավար:

Փոխայցելությունների արդյունքում ձեռք են բերվել կարևոր պայմանավորվածություններ և ստորագրվել ութսունվեց միջազգային պայմանագրեր:

2013թ. ընթացքում Հայաստանը ղեսպանատներ է հիմնել Շվեդիայում, Մեքսիկայում, Վատիկանում, Վիետնամում և Ինդոնեզիայում, մշտական ներկայացուցչություն՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում, գլխավոր հյուպատոսություններ՝ Մարսելում և Լիոնում, դիվանագիտական հարաբերություններ հաստատել 5 պետության հետ (Վանուատու, Մյանմար, Սվազիլենդ, Ուգանդա, Մավրիկիոս):

Հայաստանը շարունակել է մնալ որպես վստահելի գործընկեր, որի մասին վկայում են, այդ թվում և Հայաստանի վերաբերյալ բազմաթիվ դրական հրապարակումները հեղինակավոր միջազգային լրատվամիջոցներում:

Հանրապետության Նախագահը, վարչապետն ու ԱԳ նախարարը մի քանի տասնյակ հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ են տվել աշխարհի հեղինակավոր լրատվամիջոցներին, մի շարք օտարերկրյա երկրներում հանդես եկել դասախոսություններով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

2013թ.-ին ևս մեկ անգամ ընդգծեց, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ միջազգային հանրության դիրքորոշումը համահունչ է Հայաստանի մոտեցումներին:

Տարվա ընթացքում Հայաստանը Մինսկի խմբի համանախագահների հետ համատեղ շարունակել է հիմնախնդրի կարգավորմանն ուղղված ջանքերը:

Հունիսի 18-ին Էնիսկիլենում «Մեծ ութնյակի» գագաթաժողովի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարներ՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ու Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը հանդես են եկել ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ համատեղ՝ արդեն հինգերորդ հայտարարությամբ: Եռանախագահները ևս մեկ անգամ ընդգծել են, որ վերջին տարիներին իրենց համատեղ հայտարարություններում ամրագրված դրույթները կարող են հիմք հանդիսանալ հիմնախնդրի արդար և տևական խաղաղ կարգավորման համար և, որ դրանք պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն, և դրանցից որևիցե մեկին մյուսի նկատմամբ գերակայություն տալու փորձերն անհնարին կդարձնեն հիմնախնդրի կարգավորումը: Հայտարարության մեջ նշվում է, որ ժողովուրդներին պետք է պատրաստել խաղաղության, այլ ոչ՝ պատերազմի: Նույն օրը արձագանքելով վերոհիշյալ հայտարարությանը՝ ՀՀ արտգործնախարարը, բարձր գնահատելով Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի շարունակական ջանքերը, նշեց, որ Հայաստանը համանախագահ երկրների հետ միասնական և վճռական է հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը հասնելու նպատակով և կիսում է եռանախագահների մոտեցումը, որ անթույլատրելի է խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ շրջանակային պայմանավորվածության ձեռք բերման ձգձգումը: Արտգործնախարարը նշեց, որ Հայաստանը լիովին համամիտ է համանախագահ երկրների՝ Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և Ռուսաստանի ղեկավարների հետ, որ ուժի կիրառումը չի կարող հանգեցնել հակամարտության կարգավորմանը, և որ միայն բանակցությունների միջոցով կարելի է հասնել կայունության և խաղաղության հաստատմանը, ինչը նոր հնարավորություններ կբացի տարածաշրջանային համագործակցության և զարգացման համար, և ի պատասխան եռանախագահ երկրների ղեկավարների կոչին ևս մեկ անգամ վերահաստատեց Հայաստանի հանձնառությունը միջազգային իրավունքի սկզբունքների՝ մասնավորապես ուժի

կամ ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման ու տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա հիմնահարցի կարգավորմանը:

Նոյեմբերի 19-ին Վիեննայում տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը, որի ընթացքում նախագահները համաձայնել են թափ հաղորդել հետագա բանակցություններին՝ ուղղված խաղաղ կարգավորման ձեռքբերմանը և հանձնարարել են իրենց արտաքին գործերի նախարարներին համանախագահների հետ միասին, արվածի հիման վրա շարունակել աշխատանքը խաղաղ գործընթացի ակտիվացման նպատակով:

Դեկտեմբերի 5-ին Կիևում ԵԱՀԿ նախարարական հանդիպման շրջանակներում ընդունվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների և Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների համատեղ հայտարարությունը: Համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարները ողջունել են Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև բարձր մակարդակով երկխոսության վերսկսումը և հույս հայտնել, որ առաջիկա հանդիպումները կնպաստեն խաղաղ կարգավորման գործընթացին: Նրանք կոչ են արել կողմերին դիտարկել միջոցներ, որոնք կնվազեցնեն լարվածությունը տարածաշրջանում:

Տարվա ընթացքում (հունվարի 28-ին Փարիզում, մայիսի 17-ին Կրակովում, հուլիսի 12-ին Վիեննայում, սեպտեմբերի 28-ին Նյու Յորքում, դեկտեմբերի 4-ին Կիևում) հինգ հանդիպում է տեղի ունեցել Հայաստանի և Ադրբեջանի արտագործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի և Էլմար Մամեդյարովի միջև՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ :

Հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղիների շուրջ մտքերի փոխանակումներ են տեղի ունեցել նաև համանախագահների՝ տարածաշրջան կատարած այցերի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում:

2013թ.-ին ԱՄՆ-ի Մեյն և Լուիզանա նահանգների խորհրդարանների կողմից ճանաչվել է Արցախի Հանրապետության անկախությունը:

Հաշվետու ժամանակահատվածում արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ակտիվ աջակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ նվիրված արցախյան շարժման և սումգայիթյան ջարդերի 25-ամյակին:

Ֆրանսիայի և Լիտվայի խորհրդարաններում ստեղծվել են ԼՂՀ հետ բարեկամության խմբեր:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ

Մարտի 22-ին ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 22-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնությամբ առաջադրված ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևը:

ԱԳՆ և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից շարունակվել են աշխատանքներ իրականացվել՝ ի կատարումն Ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի ստեղծման մասին ՀՀ Նախագահի հրամանագրի:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ակտիվ աջակցությամբ Հայոց Ցեղասպանության 98-րդ տարելիցի կապակցությամբ բազմաթիվ երկրներում անց են կացվել ոգեկոչման և հիշատակի հարյուրավոր միջոցառումներ, կազմակերպվել են կոնֆերանսներ և ցուցահանդեսներ:

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների շարունակական սերտացմանն են ուղղված եղել 2013 թվականին ձեռնարկված համատեղ քայլերը:

Երկկողմ ռազմավարական միջպետական փոխգործակցության զարգացման ուղղությամբ նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման, ինչպես նաև հեռանկարային նոր ծրագրերի մշակման մեծապես նպաստել է բարձր մակարդակով ինտենսիվ քաղաքական երկխոսությունը:

Տարվա ընթացքում ՀՀ և ՌԴ նախագահներն ունեցել են վեց հանդիպում, որոնց ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել քաղաքական, արտաքին քաղաքական փոխգործակցության, ռազմական, ռազմատեխնիկական, առևտրատնտեսական, Հայաստանի տնտեսության արդիականացման և դիվերսիֆիկացիայի ապահովման, էներգետիկ, ներառյալ՝ միջուկային, տրանսպորտի, հաղորդակցությունների, ենթակառուցվածքների զարգացման, հումանիտար և այլ ոլորտներում համագործակցության խորացման ու ընդլայնման վերաբերյալ:

Հայաստանում կայացած նախագահական ընտրություններից հետո՝ մարտի 12-ին, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն իր առաջին արտերկրյա այցը կատարել է Ռուսաստանի Դաշնություն:

Սեպտեմբերի 3-ին Մոսկվա ՀՀ Նախագահի կատարած այցի շրջանակներում ընդունվել են երկու համատեղ հայտարարություններ, որտեղ արտացոլվել են հայ-ռուսական ընդգրկուն օրակարգով դաշնակցային և ռազմավարական փոխգործակցության ամրապնդման և ընդլայնման վերաբերյալ Նախագահների միջև ձեռք բերված պայմանավորվածությունները, և ՀՀ Նախագահի հայտարարությունը Մաքսային միությանը միանալու, իսկ հետագայում՝

Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացին մասնակցելու Հայաստանի որոշման, և դրան ՌԴ Նախագահի աջակցության մասին:

Դեկտեմբերի 2-ին ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Հայաստան կատարած պետական այցի շրջանակներում ձեռք են բերվել ռազմավարական նշանակության պայմանավորվածություններ՝ միտված Հայաստանի տնտեսական վերելքին և անվտանգության մակարդակի բարձրացմանը: Այցի արդյունքում ստորագրվել են 12 կարևորագույն փաստաթուղթ:

Այցի շրջանակներում Հայաստանի ու Ռուսաստանի կենտրոնական և տարածաշրջանային մակարդակով պետական մարմինների, ինչպես նաև ոչ պետական և հասարակական հատվածների ներկայացուցիչների ու շուրջ հինգ հարյուր գործարարների մասնակցությամբ ՀՀ և ՌԴ Նախագահները Գյումրիում ներկա են գտնվել հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համաժողովի բացմանը, այցելել են համաժողովի շրջանակներում կազմակերպված Հայաստանի մարզերը և Ռուսաստանի տարածաշրջանները ներկայացնող ցուցահանդես:

Նախագահները հետևել են «Հրազդանի ԶԷԿ»-ի 5-րդ էներգաբլոկի լիարժեք շահագործման հանձնման արարողությանը, այցելել են Գյումրիում տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայան, ինչպես նաև Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում և Գյումրիում ծաղկեպսակներ դրել՝ ի հիշատակ Հայոց մեծ եղեռնի և 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի զոհերի:

Զարգացում է ապրել հայ-ռուսական միջխորհրդարանական համագործակցությունը: Մայիսի 28-ին Բելգորոդի մարզում և նոյեմբերի 6-ին Երևանում կայացել են հայ-ռուսական միջխորհրդարանական հանձնաժողովի հերթական 22-րդ և 23-րդ նիստերը: Նոյեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովում անցկացվել է ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի և ՌԴ Պետական Դումայի ԱՊՀ հարցերի, Եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի հանձնաժողովի համատեղ նիստ:

Մայիսի 31-ին Մինսկում և նոյեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում կայացել են ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի և ՌԴ կառավարության նախագահ Դմիտրի Մեդվեդևի հանդիպումները, որոնց ընթացքում քննարկվել է հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններին առնչվող հարցերի լայն շրջանակ:

Սեպտեմբերի 29-30-ը Սանկտ Պետերբուրգում անցկացվել է ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 15-րդ նիստը: Ստորագրվել է մինչև 2020 թվականը ՀՀ և ՌԴ միջև երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագիրը:

Ապրիլի 25-26-ը ՀՀ ԱԳ նախարարը պաշտոնական այց է կատարել Ռուսաստան: Տարվա ընթացքում երկկողմ և բազմակողմ ձևաչափերով Հայաստանի և Ռուսաստանի արտգործնախարարները ունեցել են մոտ մեկ տասնյակ հանդիպում: Պարբերական բնույթ են կրել քաղաքական խորհրդատվությունները երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև:

Հունվարի 28-ին ՌԴ Պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն այցելել է Հայաստան: Ապրիլի 17-ին Մոսկվա է այցելել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Հաշվետու տարում բազմաթիվ փոխայցելություններ են տեղի ունեցել տարբեր գերատեսչությունների ղեկավարների և ապակենտրոնացված մակարդակներով:

Ընդլայնվել են միջտարածաշրջանային և հումանիտար կապերը: Հուլիսի 3-6-ը Սանկտ Պետերբուրգում և նոյեմբերի 27-29-ը Մոսկվայում անցկացվել են Երևանի օրերը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

2013թ. ընդլայնվել է հայ-ամերիկյան բարեկամական գործընկերությունը:

Հունիսի 4-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը այցելություն է կատարել Վաշինգտոն, որտեղ հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Ջոն Բերիի հետ, որի ժամանակ պայմանավորվածություններ են ձեռք բերվել երկկողմ համագործակցության ընդլայնման համատեղ քայլերի, ինչպես նաև մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման գործընթաց սկսելու շուրջ: Այցի շրջանակներում ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել ԱՄՆ Կոնգրեսում:

Նոյեմբերի 22-ին Վաշինգտոնում տեղի է ունեցել հայ-ամերիկյան միջկառավարական տնտեսական հանձնաժողովի հերթական նիստը, որի ընթացքում հայտարարվել է ամերիկյան Կոնտուր Գլոբալ ընկերության կողմից Որոտանի կասկադում 180 մլն. դոլարի ներդրման շուրջ ձեռք բերված պայմանավորվածության մասին և տեղեկացվել նաև, որ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից Հայաստանն ընտրվել է որպես 20 նպատակային երկրներից մեկը՝ գիտության, տեխնոլոգիայի, ինովացիաների և համագործակցության ոլորտներում ԱՄՆ-ի ՄԶԳ նախագծերի համար:

Սեպտեմբերի 18-ին Հայաստան է այցելել Կալիֆորնիայի Նահանգային ժողովի պատվիրակությունը, որն այցելել է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Եվրոպա

Եվրոպական Միություն

2013թ. եվրոպական ուղղությունը շարունակել է մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնային ուղղությունների շարքում: Հետևողական աշխատանքներ են տարվել՝ նպատակ ունենալով զարգացնել և ամրապնդել երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործակցությունն ու հարաբերությունները եվրոպական երկրների հետ:

2013 թ. Հայաստան-Եվրամիություն քաղաքական երկխոսությունը նշանավորվել է բարձրաստիճան փոխայցելությունների ինտենսիվությամբ:

Նոյեմբերի 29-ին ՀՀ Նախագահի մասնակցությամբ Վիլնյուսում կայացած Արևելյան գործընկերության երրորդ գագաթաժողովի շրջանակներում ընդունվել է ՀՀ-ԵՄ համատեղ հայտարարություն, որտեղ նշվում է, որ կողմերը ավարտել են Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, սակայն չեն նախաստորագրելու այն, քանի որ Հայաստանն ունի նոր միջազգային հանձնառություններ, միաժամանակ ԵՄ-ն և Հայաստանը վերահաստատել են իրենց հանձնառությունը՝ ավելի զարգացնելու և ամրապնդելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցությունը: Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը և ԵՄ Միասնական արտաքին և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը նամակներ են փոխանակել, որոնք ուրվագծում են ապագային միտված Հայաստանի և Եվրամիության միջև համագործակցության օրակարգը:

Տարվա ընթացքում շարունակվել է ակտիվ խորհրդարանական համագործակցությունը՝ երկկողմ և բազմակողմ ուղղություններով:

Հունվարին տեղի է ունեցել ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի այցը Բրյուսել, որտեղ նա հանդիպումներ է ունեցել Եվրախորհրդարանի նախագահի, Եվրոպական խորհրդի նախագահի, Ընդլայնման և եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատարի, Եվրախորհրդարանի ԵԺԿ խմբակցության ղեկավարի հետ, ինչպես նաև մասնակցել է Եվրախորհրդարանի Եվրամիություն - Հայաստան բարեկամության խմբի հիմնադրման արարողությանը:

Փետրվարի 12-ին ԱԳ նախարարը մասնակցել է Թբիլիսիում Արևելյան գործընկերության ոչ պաշտոնական նախարարական հանդիպմանը:

Մայիսի 17-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է Կրակովում կայացած Վիշեգրադյան քառյակի և Արևելյան գործընկերության ընդլայնված նախարարական հանդիպմանը:

Հուլիսի 22-ին նախարար Նալբանդյանը Բրյուսելում մասնակցել է ԵՄ և Արևելյան գործընկերության արտգործնախարարների հանդիպմանը:

Սեպտեմբերի 5-ին Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը Բրյուսելում հանդիպում է ունեցել Եվրոպական հանձնաժողովի ընդլայնման և եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատարի հետ:

Սեպտեմբերի 7-ին ԱԳ նախարարը Վիլնյուսում հանդիպում է ունեցել ԵՄ խորհրդում նախագահող Լիտվայի արտգործնախարար Լինաս Լինկևիչուսի, իսկ հոկտեմբերի 8-ին Բրյուսելում՝ Եվրոպական Միության արտաքին քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի հետ:

Դեկտեմբերի 9-ին տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ համագործակցության խորհրդի 14-րդ նիստը, որին հայկական պատվիրակությունը գլխավորել է ԱԳ

նախարար Էդվարդ Նալբանդյանը: Խորհրդում վերահաստատվել է երկկողմ հանձնառությունը՝ շարունակելու Հայաստանի և Եվրոպական Միության ակտիվ համագործակցությունը, որն ուղղված է ժողովրդավարական հաստատությունների և դատական համակարգի շարունակական բարելավմանը, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ամրապնդմանը, արդյունավետ կառավարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, քաղաքացիական հասարակության ամրապնդմանը, առևտրի ու ներդրումների ընդլայնման համար միջավայրի հետագա կատարելագործմանը, շարժունակության գործընկերության շարունակական իրականացմանը և ոլորտային համագործակցության ընդլայնմանը:

Հուլիսի 10-ին և սեպտեմբերի 12-ին Հայաստան է այցելել Եվրոպական Միության ընդլայնման և եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն:

Սեպտեմբերի 12-13-ը Երևանում տեղի է ունեցել Արևելյան գործընկերության ոչ պաշտոնական նախարարական հանդիպումը, որին ներկա էր նաև Շտեֆան Ֆյուլեն: Նույն օրերին զուգահեռաբար տեղի է ունեցել նաև Արևելյան գործընկերության կրթության նախարարների հանդիպումը, որին մասնակցեց նաև կրթության և մշակույթի հարցերով ԵՄ հանձնակատար Անդրուլա Վասիլիուն:

Հայաստան-ԵՄ համագործակցության առաջնահերթություններից է հանդիսացել շարժունակության խթանումը: 2013 թ. վավերացվել են Հայաստան-ԵՄ մուտքի վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերը, որոնք ուժի մեջ են մտել 2014 թ. հունվարի 1-ից: Վիզաների դյուրացման համաձայնագրով ՀՀ քաղաքացիների համար սահմանվել է պարզեցված ընթացակարգ Շենգենյան գոտու երկրներ մուտք գործելու համար, նվազեցվել է մուտքի արտոնագրի արժեքը, մի շարք կատեգորիաների համար հաստատվել է մուտքի արտոնագրի անվճար տրամադրում: Շարժունակության շուրջ հետագա երկխոսությունը միտված է լինելու մուտքի արտոնագրային ռեժիմի ազատականացմանը:

Հունվարից Հայաստանի կառավարության որոշմամբ ԵՄ քաղաքացիները ազատվել են Հայաստանի մուտքի արտոնագրի պահանջից:

Եվրոպական Միության հետ ոլորտային համագործակցության ընդլայնման նպատակով 2013 թ. Հայաստանի Ազգային ժողովի և Եվրոպական խորհրդարանի կողմից վավերացվել է Շրջանակային համաձայնագրի արձանագրությունը, որը հնարավորություն է ընձեռում Հայաստանին մասնակցություն ունենալ ԵՄ ծրագրերին և գործակալությունների աշխատանքներին:

Եվրոպական երկրներ

Տարվա ընթացքում Հայաստանի և եվրոպական երկրների միջև իրականացվել է քաղաքական ակտիվ երկխոսություն, կայացել են բարձրաստիճան և այլ մակարդակների փոխայցելություններ, աշխատանքներ են տարվել՝ խորացնելու համագործակցությունը առևտրատնտեսական, միջխորհրդարանական, կրթամշակութային, ապակենտրոնացված համագործակցության և այլ ոլորտներում:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այց է կատարել Լեհաստան և աշխատանքային այցեր՝ Ֆրանսիա, Վատիկան, Ավստրիա և Լիտվա: Միջազգային համաժողովների շրջանակներում կայացել են ՀՀ Նախագահի հանդիպումները Իսպանիայի վարչապետ Մարիանո Ռախոյի, Ֆրանսիայի Նախագահ Ֆրանսուա Օլանդի, Վիեննայում՝ Ավստրիայի Նախագահ Հայնց Ֆիշերի հետ:

Մասնավոր այցով մայիսի 28-30-ը Հայաստան է այցելել Միացյալ Թագավորության արքայազն Չարլզը:

ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը պաշտոնական և աշխատանքային այցեր է կատարել Լատվիա և Բելգիա: Հայաստան են այցելել Գերմանիայի Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամմերթը, Ռումինիայի խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահ Վալերիու Զգոնեան:

Տեղի են ունեցել խորհրդարանական պատվիրակությունների փոխայցելություններ: Արցախ են այցելել Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Դանիայի խորհրդարանականները: Ֆրանսիայի և Լիտվայի խորհրդարաններում ստեղծվել են ԼՂՀ հետ բարեկամության խմբեր:

Միջազգային համաժողովների շրջանակներում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հանդիպումներ է ունեցել Բուլղարիայի վարչապետ Պլամեն Օրեշարսկիի և Բելգիայի վարչապետ Էլիո դի Ռուպոյի հետ:

Կայացել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական և աշխատանքային այցերը մի շարք եվրոպական երկրներ, այդ թվում՝ Ավստրիա, Գերմանիա, Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն, Իսպանիա, Լիտվա, Իտալիա, Վատիկան, Շվեյցարիա, Հունաստան և Լեհաստան:

Մարտի 14-ին և հոկտեմբերի 30-ին կայացել են նախարար Էդվարդ Նալբանդյանի այցելությունները Բեռլին, որտեղ Հայաստանի արտգործնախարարը հանդիպումներ է ունեցել Գերմանիայի ԱԳ նախարար Գիդո Վեստերվելեի, ինչպես նաև Բունդեսթագի տարբեր խմբակցություններ ներկայացնող պատգամավորների հետ:

Մարտի 15-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այց է կատարել Աթենք, որտեղ հանդիպումներ է ունեցել Հունաստանի Նախագահի, ԱԳ նախարարի և խորհրդարանականների հետ:

Մայիսի 13-ին կայացել է Էդվարդ Նալբանդյանի այցելությունը Ֆրանսիա, որտեղ բանակցություններ են կայացել Ֆրանսիայի ԱԳ նախարար Լորան Ֆաբիուսի հետ: Այցի ընթացքում նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել նաև Ֆրանսիայի Սենատի անդամների և Ազգային ժողովի պատգամավորների հետ:

Մայիսի 20-21-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի այցը Միացյալ Թագավորություն: Այցի շրջանակներում նախարար

Նալբանդյանը հանդիպել է Միացյալ Թագավորության արտաքին քարտուղար Ուիլյամ Հեյզին, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի խորհրդարանի պալատների ներկայացուցիչների հետ:

Հունիսի 17-ին Մադրիդ այցելության շրջանակներում Էդվարդ Նալբանդյանը բանակցություններ է վարել Իսպանիայի ԱԳ նախարար Խոսե Մանուել Գարսիա-Մարգալյոյի հետ: Հայաստանի արտգործնախարարը հանդիպել է նաև Իսպանիայի Սենատի նախագահ Պիո Գարսիա Էսկուդերո-Մարկեսին:

Սեպտեմբերի 18-19-ը արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը այցելել է Իտալիա: Այցելության ժամանակ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել Իտալիայի արտգործնախարար Էմմա Բոնինոյի և պաշտպանության նախարար Մարիո Մաուրոյի, խորհրդարանի անդամների հետ:

Սեպտեմբերի 20-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Սուրբ Աթոռի Պետությունների հետ հարաբերությունների հարցերով քարտուղար արքեպիսկոպոս Դոմինիկ Մամբերտինին:

Սեպտեմբերի 17-ին Վարշավայում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել Լեհաստանի ԱԳ նախարար Ռադոսլավ Սիկորսկու հետ:

Հայաստան են այցելել Եվրոպական երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարներ, այդ թվում՝ Լիտվայի ԱԳ նախարար Լինաս Լինկյավիչուսը, Չեխիայի առաջին փոխվարչապետ, ԱԳ նախարար Կարել Շվարցենբերգը, Սլովակիայի փոխվարչապետ, ԱԳ և Եվրոպական հարցերի նախարար Միրոսլավ Լայչակը, Չեռնոգորիայի փոխվարչապետ, ԱԳ և Եվրոպական ինտեգրման նախարար Իգոր Լուկշիչը, Բուլղարիայի ԱԳ նախարար Կրիստիան Վիզենինը:

Միջազգային համաժողովների և բազմակողմ այլ ֆորումների շրջանակներում կայացել են ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները Շվեյցարիայի, Նիդերլանդների, Ֆինլանդիայի, Բուլղարիայի և Ռումինիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարների հետ:

Տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Բալթյան երկրների, Գերմանիայի, Ֆինլանդիայի, Չեխիայի, Լեհաստանի և Միացյալ Թագավորության արտաքին գերատեսչությունների միջև:

Տեղի են ունեցել ՀՀ պաշտպանության նախարարի այցերը Լիտվա և Հունաստան, կայացել է Հունաստանի ազգային պաշտպանության նախարարի այցը Հայաստան, Նիկոսիայում կայացել է հայ-կիպրական ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական հանդիպումը:

Կայացել են հայ-լեհական, հայ-լատվիական, հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովների նիստերը:

Հաշվետու տարում ստորագրվել է 10 երկկողմ համաձայնագիր (Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի, Լեհաստանի հետ), 2 հուշագիր (Ֆրանսիայի, Հունաստանի հետ) և 1 համատեղ հռչակագիր (Գերմանիայի հետ):

2013թ. Հայաստանը դեսպանություններ է հիմնել Սուրբ Աթոռում և Շվեդիայում, ինչպես նաև գլխավոր հյուպատոսություններ՝ Մարսելում և Լիոնում: Շվեդիայի կառավարությունը որոշում է ընդունել ռեզիդենտ դեսպանություն հիմնել Երևանում:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

Վրաստան

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի և Վրաստանի միջև բարիդրացիական հարաբերությունները շարունակական զարգացում են ապրել:

Հունվարի 17-ին կայացել է Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլիի պաշտոնական այցը Հայաստան, որի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ Նախագահի և ՀՀ վաչապետի հանդիպումները Վրաստանի վարչապետի հետ, որոնց ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները նոր խթան են հանդիսացել հայ-վրացական համագործակցության խորացման համար:

Փետրվարի 11-ին կայացել է ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի աշխատանքային այցը Վրաստան:

Ապրիլի 12-ին պաշտոնական այցով Երևան է ժամանել Վրաստանի ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն: Երկու երկրների ԱԳ նախարարները մի շարք հանդիպումներ են ունեցել բազմակողմ համաժողովների շրջանակներում:

2013թ. նոյեմբերի 17-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը և էներգետիկայի ու բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը մասնակցել են Թբիլիսիում Վրաստանի նորընտիր Նախագահ Գիորգի Մարգվելաշվիլիի երդմնակալության արարողությանը: Տեղի են ունեցել հանդիպումներ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլիի, վարչապետ Բիծինա Իվանիշվիլիի և ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեի հետ:

2013թ. ընթացքում տեղի են ունեցել Հայաստանի և Վրաստանի պաշտպանության նախարարների այցելությունները համապատասխանաբար Թբիլիսի և Երևան, տարբեր գերատեսչությունների մասով իրականացվել են ինտենսիվ բարձրաստիճան փոխայցելություններ:

Իրան

Հայ-իրանական փոխշահավետ հարաբերությունները 2013 թվականի ընթացքում շարունակել են զարգանալ: Տեղի են ունեցել բարձր մակարդակի մի շարք այցելություններ:

Օգոստոսի 5-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը Թեհրանում մասնակցել է ԻԻՀ նորընտիր Նախագահի երդմնակալության արարողությանը և հանդիպում ունեցել Նախագահ Հասան Ռոհանիի հետ:

Ապրիլի 8-9-ը աշխատանքային այցով Երևան է ժամանել ԻԻՀ ԱԳ նախարար Ալի Աքբար Սալեհին: Երևանում Իրանի ԱԳ նախարարին ընդունել է ՀՀ Նախագահը, կայացել է հանդիպում ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Երկու երկրների արտգործնախարարները մի շարք հանդիպումներ են ունեցել միջազգային համաժողովների շրջանակներում:

Տարվա ընթացքում տեղի են ունեցել հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահներ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի և ԻԻՀ էներգետիկայի նախարար Համիդ Չիթչիանի փոխայցելությունները:

Նոյեմբերի 2-4-ը ՀՀ Ազգային ժողովի Հայաստան-Իրան պատգամավորական բարեկամական խումբն այցելել է Թեհրան:

Տարվա ընթացքում տեղի են ունեցել նաև քաղաքական, իրավական, մշակութային և այլ ոլորտներում համագործակցությանը նվիրված մի շարք միջգերատեսչական փոխայցելություններ և հանդիպումներ:

Թուրքիա

Հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորման Հայաստանի սկզբունքային մոտեցումը շարունակել է վայելել միջազգային հանրության աջակցությունը:

Դեկտեմբերի 12-ին ՄԾՏՀԿ նիստին մասնակցելու նպատակով Երևան ժամանած ԹՀ ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուի հետ հանդիպման ժամանակ Էդվարդ Նալբանդյանը վերահաստատել է Հայաստանի դիրքորոշումը:

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2013թ. ընթացքում կայացել են ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստը (հոկտեմբերի 25-ին Մինսկում)՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ, ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերը (մայիսի 31-ին Մինսկում և նոյեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում)՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մասնակցությամբ, ԱՊՀ մասնակից պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի երկու նիստերը

(ապրիլի 5-ին Տաշքենդում և հոկտեմբերի 24-ին Մինսկում)՝ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի մասնակցությամբ:

Հայաստանի ներկայացուցիչները մասնակցել են ԱՊՀ շրջանակներում կայացած շուրջ 60 փորձագիտական և աշխատանքային նիստերին: Հայաստանում անցկացվել են ԱՊՀ ճյուղային մարմինների մի շարք միջոցառումներ:

«Համագործակցության մշակութային մայրաքաղաքներ» միջպետական ծրագրի իրագործման շրջանակներում 2013թ. Գյումրին հայտարարվել է Համագործակցության մշակութային մայրաքաղաք:

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայկական կողմն ակտիվ շփումներ և քննարկումներ է անցկացրել Մաքսային Միության կարգավորող մարմնի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ:

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Վիկտոր Խրիստենկոյի՝ ապրիլին Հայաստան կատարած այցի ընթացքում ստորագրվել է ՀՀ կառավարության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև փոխհամագործակցության հուշագիրը:

Սեպտեմբերի 3-ին Մոսկվայում ընդունվել է Հայաստանի և Ռուսաստանի նախագահների համատեղ հայտարարությունը, որտեղ նշվել է Մաքսային միությանը միանալու, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացին մասնակցելու Հայաստանի որոշման, և դրան ՌԴ Նախագահի աջակցության մասին:

Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցության ու Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացին մասնակցության վերաբերյալ որոշման համատեքստում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում զգալի առաջընթաց է գրանցվել Մաքսային Միությանը Հայաստանի անդամակցության ճանապարհին:

Հոկտեմբերի 24-ին ՀՀ Նախագահի մասնակցությամբ Մինսկում կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին հաստատվել է Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ երեք փաստաթուղթ:

Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի միանալու մասին որոշումը,

Եվրասիական ինտեգրացիոն գործընթացին Հայաստանի մասնակցության մասին հայտարարությունը,

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև փոխգործակցության խորացման մասին հուշագրի նախագիծը:

Նոյեմբերի 6-ին Երևանում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Վիկտոր Խրիստենկոն ստորագրել են Հայաստանի և Հանձնաժողովի միջև փոխգործակցության խորացման մասին հուշագիրը:

ՀՀ Նախագահ Ա.Սարգսյանը դեկտեմբերի 24-ին Մոսկվայում մասնակցել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին: Նիստի ընթացքում հաստատվել է Հայաստանի՝ Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին միանալու «ճանապարհային քարտեզը»:

ԱՊՀ մասնակից երկրներ

2013թ. հետևողական քայլեր են ձեռնարկվել **Բելառուսի** հետ համագործակցության առկա ծրագրերի իրականացման և դրանց հետագա խորացման ուղղությամբ:

Մայիսի 12-14-ը տեղի է ունեցել ԲՀ Նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի պաշտոնական այցը Հայաստան, որի արդյունքում ստորագրվել է երկկողմ համագործակցության զարգացմանն ու խորացմանը նպատակաուղղված հինգ համաձայնագիր:

Սեպտեմբերի 23-ին Սոչիում կայացած ՀԱՊԿ անդամ երկրների հերթական գագաթաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ և ԲՀ Նախագահների հանդիպումը:

Զարգացում է ապրել միջխորհրդարանական համագործակցությունը: Հուլիսի 11-13-ը Մինսկում անցկացվել է ՀՀ ԱԺ և ԲՀ ԱԺ միջև միջխորհրդարանական համագործակցության Հանձնաժողովի 7-րդ նիստը:

Ապրիլի 9-ին ՀՀ Նախագահի երդմնակալությանը մասնակցելու առիթով Հայաստան է ժամանել ԲՀ Ազգային ժողովի Ներկայացուցիչների պալատի նախագահ Վ.Անդրեյչենկոն:

Մայիսի 31-ին Մինսկում և նոյեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերի շրջանակներում կայացել են ՀՀ և ԲՀ վարչապետներ Տ. Սարգսյանի և Մ.Մյասնիկովիչի հանդիպումները:

Սեպտեմբերի 12-ին կայացել է ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի և Երևանում աշխատանքային այցով գտնվող Բելառուսի արտգործնախարար Վլադիմիր Մակեի հանդիպումը: Տարվա ընթացքում Հայաստանի և Բելառուսի ԱԳ նախարարները մի շարք հանդիպումներ են ունեցել նաև բազմակողմ ձևաչափով:

Օգոստոսի 27-28-ը Երևանում անցկացվել է Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստը

Ապրիլի 18-ին Երևանում կայացել են Հայաստանի և Բելառուսի ԱԳ նախարարությունների միջև հերթական խորհրդակցությունները:

Կայացել են փոխայցելություններ նաև տարբեր գերատեսչությունների ղեկավարների և ապակենտրոնացված մակարդակներով, շարունակվել է հայ-բելառուսական համագործակցության խորացումը մշակութային, գիտական և կրթական ոլորտներում: Ապրիլի 30-ից մայիսի 3-ը Բելառուսում անցկացվել են Հայաստանի մշակույթի օրերը:

Տարվա ընթացքում հետևողական քայլեր են ձեռնարկվել **Ուկրաինայի** հետ հարաբերությունների հետագա խորացման և ընդլայնման, նոր համատեղ ծրագրերի մշակման և դրանց իրագործման ուղղությամբ:

Հուլիսի 15-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ընդունել է ԵԱՀԿ գործող նախագահ, Ուկրաինայի ԱԳ նախարար Լեոնիդ Կոժարային, տեղի է ունեցել Լեոնիդ Կոժարայի հանդիպումը ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Հունիսի 21-ին Օդեսայում ՄԾՏՀ նախարարների խորհրդի նիստի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը Ուկրաինայի ԱԳ նախարարի Լեոնիդ Կոժարայի հետ: ՀՀ և Ուկրաինայի ԱԳ նախարարները հանդիպել են նաև միջազգային համաժողովների շրջանակներում:

Նոյեմբերի 7-8-ը Կիևում անցկացվել է տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստը:

Հաշվետու տարում կայացել են փոխայցելություններ նաև տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակներով:

2013թ. ձեռնարկվել են քայլեր Հայաստանի և **Մոլդովայի** միջև հարաբերությունների հետագա խորացման ու զարգացման, նոր հեռանկարային ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ:

Հուլիսի 11-ին կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Մոլդովա, որի արդյունքում ստորագրվել է երկու համաձայնագիր:

Փետրվարի 13-ին Թբիլիսիում «Արևելյան գործընկերության» նախարարական հանդիպման շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը ՄՀ փոխվարչապետ, ԱԳ և եվրոպական ինտեգրացիայի նախարար Յուրի Լյանկեի հետ:

Հուլիսի 12-ին աշխատանքային այցով Քիշնևում գտնվող ՀՀ ԱԳ նախարարը հանդիպումներ է ունեցել Մոլդովայի փոխվարչապետ, արտաքին գործերի և եվրոպական ինտեգրացիայի նախարար Նատալյա Գերմանի հետ: Նախարարների հանդիպումներ են կայացել հունիսի 21-ին Օդեսայում ՄԾՏՀ նախարարների խորհրդի նիստի, սեպտեմբերի 12-ին Երևանում Արևելյան գործընկերության անդամ երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպման շրջանակներում:

2013թ. շարունակվել է հայ-թուրքմենական բարեկամական կապերի հետևողական զարգացումը:

Սեպտեմբերի 27-ին Նյու-Յորքում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը **Թուրքմենստանի** փոխվարչապետ, ԱԳ նախարար Ռաշիդ Մերեդովի հետ:

Հոկտեմբերի 2-3-ը Աշխաբադում կայացել է հայ-թուրքմենական միջկառավարական տնտեսական հանձնաժողովի 5-րդ նիստը: Հոկտեմբերի 3-ին տեղի են ունեցել խորհրդակցություններ Հայաստանի և Թուրքմենստանի ԱԳ նախարարությունների միջև:

Շարունակվել է համագործակցությունը Հայաստանի և **Ղազախստանի** միջև:

Նոյեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստի շրջանակներում Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը հանդիպում է ունեցել Ղազախստանի վարչապետ Սերիկ Ախմետովի հետ:

Հոկտեմբերի 24-25-ը Երևանում կայացել է Հայ-ղազախական առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հինգերորդ նիստը:

Ապրիլի 5-ին Տաշքենդում ԱՊՀ անդամ պետությունների արտգործնախարարների խորհրդի, ինչպես նաև մայիսի 27-ին ՀԱՊԿ արտգործնախարարների խորհրդի նիստերի շրջանակներում կայացել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները **Ղրղզստանի** ԱԳ նախարար Էոլան Աբդիլակի հետ:

Հաշվետու տարում ձեռնարկվել են քայլեր հայ-ուզբեկական հարաբերություններն աշխուժացնելու ուղղությամբ: Ապրիլի 5-ին Տաշքենդում ԱՊՀ արտգործնախարարների խորհրդի նիստի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը **Ուզբեկստանի** ԱԳ նախարար Աբդուլազիզ Կամիլովի հետ:

ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՖՐԻԿԱ

2013 թվականի ընթացքում շարունակվեցին քայլեր ձեռնարկվել Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ հարաբերությունների ընդլայնման ուղղությամբ:

Կյանքի են կոչվել 2012 թվականին ՀՀ Նախագահի և ԱԳ նախարարի Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի մի շարք երկրներ կատարված այցերի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները, որոնք դրական դինամիկա են հաղորդել տարածաշրջանի պետությունների հետ Հայաստանի հարաբերություններին:

Հետևողական ջանքեր են գործադրվել **Չինաստանի** հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Սեպտեմբերի 11-13-ը ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը ՉԺՀ Դալիան քաղաքում մասնակցել է Համաշխարհային տնտեսական համաժողովին: ՀՀ վարչապետը հանդիպումներ է ունեցել ՉԺՀ պետական խորհրդի նախագահ Լի Քեյցյանի հետ: Ստորագրվել են ՀՀ և ՉԺՀ կառավարությունների միջև առևտրատնտեսական համագործակցության, տնտեսական և տեխնիկական համագործակցության մասին համաձայնագրերը, արտակարգ իրավիճակների բնագավառում հայ-չինական համագործակցության մասին հուշագիրը: Այցի շրջանակներում ՉԺՀ Չյանսու նահանգի Թայճոու քաղաքի Global Purchasing Center ցուցահանդեսային կենտրոնում կայացել է հայկական ապրանքատեսակների ցուցադրության բացումը:

Հուլիսի 25-26-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Չինաստան: Այցի ընթացքում ՀՀ ԱԳ Նախարարը հանդիպումներ է ունեցել Չինաստանի Պետական խորհրդի անդամ Յան Ձիեչիի և ՉԺՀ ԱԳ Նախարար Վան Յիի հետ: Այցի ընթացքում ստորագրվել են ՀՀ և ՉԺՀ ԱԳՆ-երի միջև խորհրդակցությունների մասին արձանագրությունը և ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական դպրոցի և Չինաստանի արտաքին հարաբերությունների համալսարանի միջև համագործակցության վերաբերյալ հուշագիրը:

Դեկտեմբերի 10-17-ը Չինաստան է այցելել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունը:

Պեկինում կայացել է հայ-չինական միջկառավարական առևտրատնտեսական համագործակցության հանձնաժողովի հերթական նիստը:

Դեկտեմբերի 4-7-ը ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած խորհրդարանական պատվիրակությունը այց է կատարել **Հնդկաստանի Հանրապետություն**, որի ընթացքում հանդիպումներ է ունեցել Հնդկաստանի Հանրապետության Նախագահի, խորհրդարանի երկու պալատների խոսնակների և ԱԳ նախարարի հետ:

Սեպտեմբերի 25-26-ին Դելիում կայացել են հայ-ինդիական միջկառավարական առևտրատնտեսական համագործակցության հանձնաժողովի նիստը և քաղաքական խորհրդակցություններ՝ Հայաստանի և Հնդկաստանի ԱԳՆ-երի միջև:

Հոկտեմբերի 29-31-ը Հայաստան է այցելել Հնդկաստանի խորհրդարանական պատվիրակությունը:

Շարունակվել են քայլերը **Ճապոնիայի** հետ համակողմանի համագործակցության խորացման ուղղությամբ: Փետրվարի 1-ին Երևանում տեղի են ունեցել ԱԳՆ-երի միջև խորհրդակցություններ: Ճապոնիայի կառավարությունը որոշում է ընդունել Հայաստանում դեսպանատուն բացելու մասին:

Նոյեմբերի 15-ին տեղի է ունեցել «Հիտաչի» ընկերության նախկին գործադիր տնօրեն Յուզիո Մակիմոտոյի այցը Հայաստան, որի ընթացքում նա ստացել է

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի մրցանակը:

Դեկտեմբերի 3-ին Հայաստան է այցելել **Նոր Զեւանդիայի** վարչապետի հատուկ բանագնացը: Քաղաքական խորհրդակցություններ են անցկացվել այդ երկրի արտաքին քաղաքական գերատեսչության հետ:

2013թ. Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Վանուատուի, Մյանմարի, Սվազիլենդի, Ուգանդայի, Մավրիկիոսի հետ:

Հայաստանի դեսպանություններ են հիմնադրվել Վիետնամում և Ինդոնեզիայում:

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Չնայած արաբական մի շարք երկրներում շարունակվող ներքին անկայունությանը՝ տարվա ընթացքում քայլեր են ձեռնարկվել այդ երկրների հետ ավանդական բարեկամական հարաբերությունների պահպանման և զարգացման ուղղությամբ:

Նկատի ունենալով Սիրիայում ծավալվող իրադարձությունները, շարունակվող բախումները և խորացող հումանիտար ճգնաժամը՝ Հայաստանը տարբեր ուղղություններով և մակարդակներով քայլեր է ձեռնարկել սիրիահայության անվտանգության ապահովման և պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ:

Հոկտեմբերի 21-ին Հայաստանում էր **Արաբական պետությունների լիգայի** գլխավոր քարտուղարի տեղակալ Ֆադել Մուհամեդ Զավադի գլխավորած պատվիրակությունը, որին ընդունեց ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Նոյեմբերի 5-8-ը Երևանում տեղի է ունեցել Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստը, որին մասնակցելու նպատակով Հայաստան էր ժամանել **Իրաքի** պատվիրակությունը՝ փոխվարչապետ Ռոժ Նուրի Շաուեյսի գլխավորությամբ:

Դեկտեմբերի 2-4-ը կայացել է Իրաքի արտգործնախարար Հոշիար Զեբարիի պաշտոնական այցը Երևան: Այցի ընթացքում ստորագրվել է երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը:

Հուլիսի 5-ին մեկնարկեցին լիբանանյան Middle East Airlines ավիաընկերության Բեյրութ-Երևան-Բեյրութ կանոնավոր չվերթները:

Հոկտեմբերի 7-ին ժնկում Միջխորհրդարանական միության 129-րդ վեհաժողովի շրջանակներում ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը հանդիպել է **Լիբանանի** խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրրիի հետ:

Հունիսին ստորագրվել է «ՀՀ և Հորդանանի կառավարությունների միջև կրթության և գիտության ոլորտում համագործակցության վերաբերյալ» համաձայնագիրը:

Մարտի 20-ին տեղի է ունեցել ՀՀ փոխվարչապետ, հայ-քուվեյթյան միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Արմեն Գևորգյանի աշխատանքային այցը **Քուվեյթի Պետություն:**

Մայիսի 29-ից հունիսի 2-ը պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Քուվեյթի խորհրդարանի նախագահ Ալի Ֆահդ Ալ-Ռաշիդի գլխավորած պատվիրակությունը:

Մայիսի 18-ին տեղի է ունեցել ՀՀ փոխվարչապետ, ՀՀ և **Արաբական Միացյալ Էմիրությունների** կառավարությունների միջև առևտրատնտեսական և տեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողովի համանախագահ Արմեն Գևորգյանի այցը Աբու Դաբի:

Մարտի 20-21-ը տեղի է ունեցել ՀՀ փոխվարչապետ, հայ-քաթարական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Արմեն Գևորգյանի այցը **Քաթարի Պետություն:**

2013 թ. հունիսին վերաբացվել է Հայաստանի Հանրապետությունում Իրաքի Հանրապետության դեսպանությունը:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Ապրիլի 10-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է **Կանադայի** կառավարության հատուկ բանագնաց Դիպակ Օբրայի գլխավորած պատվիրակությանը:

2013թ. սեպտեմբերի 23-27-ին Հայաստան և Արցախ է այցելել Կանադայի խորհրդարանի անդամ Ստեֆան Դիոնը:

Շարունակել են ակտիվանալ լատինաամերիկյան պետությունների հետ Հայաստանի հարաբերությունները:

Նոյեմբերի 18-26-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը **Բրազիլիա, Ուրուգվայ և Արգենտինա**, որտեղ հանդիպումներ են կայացել այդ երկրների խորհրդարանների ղեկավարների և գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 68-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել **Չիլիի** ԱԳ նախարար Ալֆրեդո Մորենո Չարմեի, **Պանամայի** ԱԳ նախարար Ֆերնանդո Ֆաբրեգայի, **Կոլումբիայի** ԱԳ նախարար Մարիա Անխելա Օլգինի հետ:

Ապրիլին Երևան է այցելել Արգենտինայի փոխնախագահ և Սենատի նախագահ Ամադո Բուդուն:

Հոկտեմբերի 17-19-ը Երևանում տեղի է ունեցել հայ-արգենտինյան գործարար համաժողովը, որին մասնակցելու նպատակով Հայաստան էր ժամանել Արգենտինայի արտաքին առևտրի քարտուղար Բեստրիս Պազլիերին:

Նոյեմբերի 9-17-ը ՀՀ-ում էր գտնվում Ուրուգվայի Արևելյան Հանրապետության Զբոսաշրջության և Սպորտի նախարար հայազգի Լիլիամ Քեշիշյանը, որին ընդունել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Մարտի 11-ին և նոյեմբերի 15-ին Երևանում տեղի են ունեցել խորհրդակցություններ համապատասխանաբար Հայաստանի և Բրազիլիայի ու Հայաստանի և Ուրուգվայի արտաքին գործերի նախարարությունների միջև:

2013թ. հիմնադրվել է **Մեքսիկայում** Հայաստանի դեսպանությունը:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԿ

2013թ. Հայաստանը շարունակել է ակտիվորեն մասնակցել Հավաքական անվտանգության Պայմանագրի (ՀԱՊԿ) Կազմակերպության աշխատանքներին:

Սեպտեմբերի 23-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Սոչիում կայացած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հերթական նստաշրջանին:

Հայաստանը մասնակցել է նաև Արտաքին գործերի և պաշտպանության նախարարների խորհուրդների ու անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի նիստերին, որոնց ընթացքում ընդունվել են մի շարք փաստաթղթեր՝ ուղղված Կազմակերպության անդամ պետությունների ռազմական համագործակցության խորացմանը, հավաքական անվտանգության ուժերի և միջոցների համակարգի կառավարման մարմինների ու կազմավորումների օպերատիվ և մարտական պատրաստմանը:

Հունվարին Երևանում կայացել են ՀԱՊԿ Ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի և դրան կից Գործարար խորհրդի Հայաստանի ու Ռուսաստանի ազգային մասերի նիստերը: Հունիսին կայացել է «ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի ձևավորման քաղաքական և անվտանգության կողմնորոշիչները» խորագրով ռազմավարական քաղաքական համաժողովը: Հոկտեմբերին կայացել է ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի նիստը: Նույն օրերին Հայաստանում անցկացվել են թմրանյութերի դեմ պայքարին նվիրված համալիր միջոցառումներ՝ «Կանալ Կովկաս» խորագրով:

Հայաստանը մասնակցել է ՀԱՊԿ շրջանակներում Ղազախստանում, Բելառուսում և Ռուսաստանում անցկացված մի շարք գորավարժությունների:

Մայիսին Բիշքեկում և սեպտեմբերին Սոչիում, իսկ դեկտեմբերին Կիևում՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդի նախօրեին, տեղի են ունեցել ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպումները՝ նվիրված արտաքին քաղաքականության համադրման հարցերին:

Բիշքեկում կայացած ՀԱՊԿ Արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստն ամփոփվել է միջազգային հարաբերությունների օրակարգային հարցերին նվիրված հայտարարությամբ, որտեղ նաև նշվել է, որ ՀԱՊԿ անդամ երկրները, վերահաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքների արագ ավարտման կարևորությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնադրույթների հիման վրա, որոնք, մասնավորապես, վերաբերում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը, տարածքային ամբողջականությանն ու ժողովուրդների ինքնորոշմանը:

ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժան անցյալ տարվա հունվարին, ապրիլին, հունիսին և հոկտեմբերին այցելել է Հայաստան, հանդիպումներ ունեցել երկրի բարձրաստիճան ղեկավարների հետ:

ՆԱՏՕ

2013 թվականի ընթացքում աշխատանքներ են տարվել Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների 2011-2013թթ. Ծրագրի (ԱԳԳԾ) իրականացման ուղղությամբ: Պատրաստվել է Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ 2014-2016թթ. փաստաթուղթը:

Շարունակվել է Հայաստան-ՆԱՏՕ քաղաքական երկխոսությունը, համագործակցությունը՝ արտակարգ իրավիճակների կառավարման, խաղաղապահության, հանրային դիվանագիտության և պաշտպանական քաղաքականության բնագավառներում:

Ապրիլի 8-ին Երևան է ժամանել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Կոլինդա Գրաբար-Կիտարովիչը:

Ապրիլի 23-ին ԱԳ նախարարը մասնակցել է Բրյուսելում տեղի ունեցած Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցության ուժերի ԱԳ նախարարների մակարդակով Հյուսիսատլանտյան Խորհրդի հանդիպմանը:

Հունիսի 24-ին ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում ՀՀ պատվիրակությունը մասնակցել է ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի

2012-2013թթ. գնահատման զեկույցի քննարկման նպատակով գումարված ՆԱՏՕ+Հայաստան Հյուսիս – ատլանտյան խորհրդի նիստին:

Հոկտեմբերի 17-18-ը Հայաստան է այցելել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրայը:

Նոյեմբերի 18-22-ը Հայաստանում անցկացվել է «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումը:

ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը շարունակել է մասնակցությունը Աֆղանստանում և Կոսովոյում խաղաղապահ առաքելություններին:

Որոշում է կայացվել մասնակցել Հարավային Լիբանանում իրականացվող ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությանը (UNIFIL):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 26-28--ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 68-րդ նստաշրջանի աշխատանքներին: Հայաստանի արտգործնախարարը ելույթ է ունեցել Գլխավոր Ասամբլեայի նիստին, հանդիպում ունեցել կազմակերպության գլխավոր քարտուղարի և մի շարք երկրների արտգործնախարարների հետ:

Փետրվարի 27-ին Վիեննայում կայացած ՄԱԿ-ի Քաղաքակրթությունների դաշինքի հինգերորդ գլոբալ ֆորումի աշխատանքներին Հայաստանի պատվիրակությունը գլխավորել է և ելույթով հանդես է եկել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը նոյեմբերի 11-ին ելույթ է ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր կոնֆերանսի Փարիզում կայացած 37-րդ նստաշրջանին:

Հոկտեմբերի 21-23-ը տեղի է ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ, ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի գործադիր տնօրեն Յուրի Ֆեդոտովի այցը Հայաստան, որին ընդունել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Հայաստանը ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի անդամ:

2013 թվականի մարտի 22-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի կողմից առաջադրված «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը:

ԱԳՆ-ն աջակցություն է ցուցաբերել ՀՀ նախագահական ընտրությունների դիտարկման միջազգային դիտորդական առաքելություններին: Շարունակվել է ՀՀ դիտորդների մասնակցությունը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և ԱՊՀ դիտորդական առաքելություններում:

Հայաստանը շարունակել է սերտ համագործակցությունը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում միջազգային, տարածաշրջանային, ինչպես նաև երկկողմ մակարդակով: Այս բնագավառում արձանագրված արդյունքները արժանացել են միջազգային բարձր գնահատականների:

Հաշվետու տարվա ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հաստատվել է Ազգային հանձնաժողովի կողմից ներկայացված 5 ծրագրային առաջարկ:

Հունիսի 18-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» միջազգային ռեգիստրում (գրանցամատյանում) ՀՀ նախաձեռնությամբ գրանցվել են «Արամ Խաչատրյանի ձեռագիր նոտաները և կինոերաժշտությունը»: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2014-2015 թթ. հորելյանների ցանկում ներառվել են Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի 200-ամյակը, Ոսկան Երևանցու (Ոսկան վարդապետի) 400-ամյակը և ճարտարապետ Թորոս Թորամանյանի 150-ամյակը:

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ԵԱՀԿ շրջանակներում ՀՀ համագործակցությունը մասնակից երկրների և կազմակերպության գործադիր կառույցների հետ:

Հուլիսին 15-ին Հայաստան է այցելել ԵԱՀԿ գործող նախագահ, Ուկրաինայի ԱԳ նախարար Լեոնիդ Կոժարան, որին ընդունել է Հանրապետության Նախագահը, բանակցություններ են կայացել ՀՀ ԱԳ նախարարի հետ:

Հունիսի 6-ին ԱԳ նախարարը ելույթ է ունեցել ԵԱՀԿ մշտական խորհրդում:

Դեկտեմբերի 6-ին Կիևում կայացած ԵԱՀԿ 20-րդ նախարարական համաժողովին ելույթով հանդես է եկել հայկական պատվիրակությունը գլխավորող ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը տարվա ընթացքում մի քանի հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերի հետ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը շարունակել է համակարգել ՀՀ տարբեր գերատեսչությունների և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի միջև համագործակցությունը, որն իրականացվել է անվտանգության, տնտեսության, բնապահպանության, մարդու իրավունքների և արդյունավետ կառավարման ոլորտներում:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

2013թ. մայիսի 16-ից նոյեմբերի 14-ը Հայաստանն իրականացրել է Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի նախագահությունը: Հայաստանն ակտիվ և արդյունավետ կատարել է նախագահողի առաքելությունը և կարևոր ներդրում ունեցել Եվրոպայի խորհրդի նպատակների իրականացման գործում:

Նախագահության ծրագրում ընդգրկված են եղել երեք տասնյակից ավելի միջոցառումներ, որոնք կառուցված էին նախագահության հիմնական գերակայությունների շուրջ՝ ռասիզմի և այլատյացության դեմ պայքար, միջմշակութային երկխոսության միջոցով եվրոպական արժեքների խթանում, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության միջազգային չափանիշների ամրապնդում, ժողովրդավարական հասարակությունների խթանում, եվրոպական ճարտարապետության մեջ Եվրոպայի Խորհրդի դերի ամրապնդում: Առանցքային միջոցառումներից էին ԵԽ խորհրդարանական վեհաժողովի (մայիս) և Տեղական ու տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի (հունիս) բյուրոների երևանյան նիստերը, «Պայքար Եվրոպայում խտրականության, այլատյացության և անհանդուրժողականության դեմ» թեմայով բարձրաստիճան խորհրդաժողովը (հոկտեմբեր), «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներում» (հուլիս), «Մասնակցային ժողովրդավարության զարգացումը տեղական մակարդակով» (հունիս), թեմաներով կոնֆերանսները, ԵԽ Միջմշակութային երկխոսության կրոնական հարթության 2013թ. հանդիպումը (սեպտեմբեր), ԵԽ անդամ երկրների մայրաքաղաքների խորհրդաժողովը (հոկտեմբեր) և այլ միջոցառումներ:

Հոկտեմբերի 2-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը այցելել է ԵԽ կենտրոնակայան, ելույթով հանդես եկել ԵԽ խորհրդարանական վեհաժողովի լիազումար նստաշրջանում, հանդիպումներ ունեցել ԵԽ գլխավոր քարտուղար Թյորբյորն Յագլանդի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) նախագահ Ժան-Կլոդ Մինյոնի և ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիկսի հետ:

Եվրոպայի խորհուրդ են այցելել նաև ՀՀ Ազգային ժողովի նախագահը և փոխվարչապետը:

Որպես ԵԽ Նախարարների կոմիտեի նախագահ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը այցելություններ է կատարել Ստրասբուրգ, ելույթներով հանդես եկել ԵԽ Նախարարների կոմիտեի նիստերին և ԵԽԽՎ նստաշրջաններին:

Հայաստան են այցելել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թյորբյորն Յագլանդը, Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ժան-Կլոդ Մինյոնը, Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի նախագահ Հերվիգ Վան Շտաայը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շպիլմանը, ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիկսը, ԵԽ «Իրավունքի միջոցով ժողովրդավարության հանձնաժողովի» նախագահ Ջիանի Բուքիքին:

Տարվա ընթացքում շարունակվել է Հայաստան-Եվրոպայի Խորհուրդ 2012-2014թթ. Գործողությունների ծրագրի իրականացումը:

Հայաստանը ստորագրել և վավերացրել է Եվրոպայի խորհրդի մի շարք իրավական փաստաթղթեր, մասնավորապես՝ ստորագրվել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ և 16-րդ լրացուցիչ արձանագրությունները, վավերացվել՝ «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի», «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ» լրացուցիչ արձանագրությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանն ընտրվել է Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) բյուրոյի անդամ:

ՍԵՎԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2013թ. հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ը նշանավորվել է ՍԾՏՀ կազմակերպությունում Հայաստանի նախագահությամբ, որի ընթացքում անցկացվել է ավելի քան 70 միջոցառում՝ տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների, տրանսպորտի, բնապահպանության, գյուղատնտեսության, էներգետիկայի, փոքր և միջին ձեռնարկությունների և այլ ուղղություններով:

Հայաստանը շարունակել է համակարգել ՍԾՏՀ Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ICT) և առողջապահական հարցերով աշխատանքային խմբերը:

Սեպտեմբերին Նյու Յորքում տեղի է ունեցել ՍԾՏՀ ԱԳ նախարարների ոչ պաշտոնական հանդիպումը, որը նախագահել է ՍԾՏՀ գործող նախագահ՝ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Սեպտեմբերին տեղի է ունեցել ՍԾՏՀ անդամ երկրների ներքին գործերի նախարարների հանդիպումը:

Հոկտեմբերի 5-ին Երևանում կազմակերպվել է ՍԾՏՀ անդամ երկրների տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) բարձր մակարդակի համաժողով, որին ընդունվել է ՍԾՏՀ ՏՏ ինկուբատորների ասոցիացիա ստեղծելու մասին որոշումը:

Հոկտեմբերին Հայաստանում կայացել է Արևելյան գործընկերության և ՄԾՏՀ երկրների եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ստեղծման կրթության նախարարների տարածաշրջանային հանդիպումը:

Դեկտեմբերի 12-ին Երևանում կայացել է ՄԾՏՀ արտաքին գործերի նախարարների խորհրդի 29-րդ նիստը, որտեղ ՄԾՏՀ գործող նախագահ, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը կազմակերպության նախագահությունը փոխանցել է Բուլղարիայի ԱԳ նախարար Կրիստիան Վիգենինին:

ՄԾՏՀ գլխավոր քարտուղար Վիկտոր Ցվիրկունը երկու այցելություն է կատարել Երևան:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 7-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է Փարիզում կայացած Ֆրանկոֆոնիայի 29-րդ նախարարական համաժողովին, որի ժամանակ հանդես է եկել ելույթով:

Նոյեմբերի 14-16-ը Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Փարիզում կայացած Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի (ՖՔՄԱ) 33-րդ գլխավոր համաժողովին:

Սեպտեմբերի 5-15-ը Ֆրանսիայի Նիս քաղաքում կայացել են Ֆրանկոֆոնիայի 7-րդ խաղերը, որին մասնակցել է 40-ից ավելի մարզիկներից կազմված հայկական պատվիրակությունը՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Յուրի Վարդանյանի գլխավորությամբ:

Նոյեմբերին Երևանում կայացել է Սենգորի անվան ամբիոնների միջազգային ցանցի «Ֆրանսերենի և ֆրանսերենով դասավանդման հեռանկարները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում» գիտաժողովը:

2013թ.-ին հիմնվել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարթություններով տնտեսական համագործակցության խորացումը շարունակել է կարևոր տեղ զբաղեցնել արտաքին քաղաքական օրակարգում:

Աշխատանքներ են տարվել արտերկրում ՀՀ տարբեր գերատեսչությունների և միջազգային ֆինանսա-տնտեսական կառույցների միջև հարաբերությունների զարգացման, արտասահմանում հայկական արտադրանքի ներկայացման, օտարերկրյա ներդրումների խրախուսման, գործարար համաժողովների կազմակերպման ուղղություններով:

Հայաստանը միացել է «Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» և «Տարանցման ազատության մասին» կոնվենցիաներին, ինչպես նաև ստորագրել է «Չոր նավահանգիստներ» (Dry Ports) միջկառավարական բազմակողմ համաձայնագիրը:

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱԳՆ-ը, դիվանագիտական ներկայացուցչությունները նպաստել են խորհրդարանական դիվանագիտության ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ բարեկամական խմբերի փոխայցելություններին, միջխորհրդարանական հանձնաժողովների նիստերի անցկացմանը, միջխորհրդարանական կապերի ամրապնդմանն ու ընդլայնմանը:

ԱԳՆ-ը համակարգել է Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը:

Արտգործնախարարությունը շարունակել է նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, համակողմանիորեն աջակցել Սփյուռքի նախարարության ծրագրերին և նախաձեռնություններին: Սեպտեմբերի 21-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը և Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունել են Հայկական հիմնախնդիրների իրազեկման կառույցների ներկայացուցիչների համաժողովի մասնակիցներին:

ԱԳՆ կողմից շարունակվել է աջակցության ցուցաբերումը ՀՀ մշակույթի նախարարությանը՝ արտերկրում հայկական մշակույթի ճանաչողության բարձրացման, ինչպես նաև հայկական մշակութային ժառանգության պահպանման գործում:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից և աջակցությամբ արտերկրում կազմակերպվել են հայկական մշակույթը ներկայացնող տասնյակ մշակութային փառատոներ, մշակութային օրեր, ցուցահանդեսներ և համերգներ: Մի շարք երկրներում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների աջակցությամբ կազմակերպվել են հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին և Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին նվիրված միջոցառումներ:

Հատուկ կարևորություն է տրվել ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանը, Հայաստանի մարզերի և քաղաքների՝ տարբեր երկրների վարչատարածքային միավորների հետ հարաբերությունների հաստատմանը և խորացմանը:

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

2013թ. ընթացքում ստորագրվել է 64 միջազգային պայմանագիր և 22 միջազգային պայմանագիր չհանդիսացող փաստաթուղթ, վավերացվել/հաստատվել է 95 և ուժի մեջ է մտել 51 միջկառավարական և միջպետական փաստաթուղթ:

ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ մշակվել և ընդունվել են շուրջ 60 իրավական ակտեր:

ԱԳՆ համակարգում շրջանառվել է շուրջ 130000 փաստաթուղթ:

Տարվա ընթացքում ՀՀ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Վանուատուի, Մյանմարի, Սվազիլենդի, Ուգանդայի և Մավրիկիոսի հետ:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2013թ. ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և արտերկրում հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվել է շուրջ 125.000 քաղաքացի:

Տարվա ընթացքում ընդունվել են հյուպատոսական ոլորտին առնչվող մի շարք իրավական ակտեր և փոփոխություններ են կատարվել գործող իրավական ակտերում, որոնցով կանոնակարգվել և ավելի են դյուրացվել քաղաքացիներին մատուցվող հյուպատոսական ծառայությունները: Վավերացվել է ՀՀ և ԵՄ միջև մուտքի արտոնագրերի դյուրացման մասին համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից՝ զգալիորեն դյուրացնելով ՀՀ քաղաքացիների համար Շենգենյան համաձայնագրի երկրների մուտքի արտոնագրերի ձեռք բերման գործընթացը:

2013թ. շարունակվել է «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգի ներդրման գործընթացը: Համակարգին միացվել են օտարերկրյա պետություններում գտնվող գրեթե բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները: Տարվա ընթացքում «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգի միջոցով իրականացվող գործառույթներին է ավելացել ՀՀ-ում դատվաժության և հետախուզման առկայության մասին տեղեկանքների ձևակերպման գործառույթը: Ռուսաստանում, Չեխիայում և Ֆրանսիայում ՀՀ դեսպանություններում գործարկվել է կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրերի տրամադրման համակարգը:

ՀՀ ԱԳՆ-ն և դիվանագիտական ներկայացուցչությունները շարունակել են աջակցություն ցուցաբերել ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին, ինչպես նաև աշխատանքներ տարել նրանց հայրենիք վերադառնալու հարցում օժանդակություն ցուցաբերելու գործում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Հանրապետության Նախագահը, վարչապետն ու ԱԳ նախարարը մի քանի տասնյակ հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ են տվել աշխարհի հեղինակավոր լրատվամիջոցներին:

2013թ. ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարը ելույթներով հանդես է եկել Վիեննայի դիվանագիտական ակադեմիայում, Գերմանիայի Արտաքին քաղաքականության խորհրդում, Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայում, Ֆրանսիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում, Վաշինգտոնի Միջազգային և ռազմավարական հետազոտությունների կենտրոնում, Չինաստանի ԱԳՆ միջազգային հետազոտությունների ինստիտուտում, Հոնոլուլուի միջազգային հարաբերությունների ինստիտուտում, Զարգացման և վերակառուցման Եվրոպական բանկում, Օքսֆորդի, Հարվարդի և Ժնևի համալսարաններում:

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալները, դեսպաններն ու գլխավոր հյուպատոսները հարցազրույցներ են տվել օտարերկրյա լրատվամիջոցներին, ելույթներ ունեցել մի շարք հետազոտական կենտրոններում և համաժողովներում:

Հաշվետու տարում տեղի են ունեցել միջազգային առաջատար լրատվամիջոցների նկարահանող խմբերի և թղթակիցների այցելություններ Հայաստան և Արցախ: Առաջատար արտասահմանյան լրատվամիջոցները բազմաթիվ հոդվածներ և հաղորդումներ են ներկայացրել Հայաստանի վերաբերյալ:

Տարվա ընթացքում հեղինակավոր Foreign Affairs ամսագրի 2014 թ. հունվար-փետրվար համարում Հայաստանի տնտեսության և ներդրումային հնարավորությունների մասին ծավալուն ներդիրը նախապատրաստող խումբը Հայաստանում իրականացրել է ուսումնասիրություններ և անցկացրել հարցազրույցներ:

2013թ. ընթացքում ավարտին է հասցվել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միասնական համակարգով գործող կայքերի մշակումը: